



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Ս. ՆԱՅԱՆՔՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀՅՈՐ ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ Ս. ԾՆՆՂԵԱՆ ԸՆԹՐԻՔԸ**

Ազգային Առաջնորդարանի տարիներու բարի աւանդութեանց շարքին է Ս. Ծննդեան ու Ամանորի Առաջնորդ Սրբազան Հօր ընթրիքը:

Ամէն տարի, 6 Յունուարի երեկոյեան, ժողովականութեան ներկայացուցիչներ, բարերարներ ու բարեկամներ մէկ յարկի տակ կը համախմբուին Առաջնորդ Սրբազան Հօր, հոգեւորականներուն եւ Ազգ. Իշխանութեան անդամներու շուրջ, աղօթքով ու բարեմաղթութեանց փոխանակումով սկսելու նոր տարին ու յիշատակելու Զրիստոսի հրաշալի Ս. Ծնունդը:

Այս տարի եւս, նախաձեռնութեամբ Թեմիս Կրօնական Ժողովին ու Ազգային Վարչութեան, Առաջնորդ Սրբազան Հօր Ս. Ծննդեան ընթրիքը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 6 Յունուար 2012-ին, երեկոյեան ժամը 7:30-ին, Սոնթայելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի «Բաղրամեան» սրահին մէջ:

Ձեռնարկը կազմակերպուած է Ազգային Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին կողմէ:

Յաւելեալ տեղեկութեանց համար հեռաձայնել Ազգային Առաջնորդարան:

## **PRELATE'S NEW YEAR AND CHRISTMAS DINNER**

Each year on the evening of January 6<sup>th</sup>, Prelacy clergy, sponsors, friends, and representatives of sister organizations gather for the Prelate's traditional New Year and Christmas Dinner to collectively celebrate the New Year and the Glorious Birth and Theophany of our Lord Jesus Christ.

This annual dinner organized by the Prelacy Ladies Auxiliary, will take place on Friday, January 6<sup>th</sup>, 2012, at "Bagramian" Hall of Holy Cross Cathedral in Montebello, starting at 7:30 p.m.

Please contact the Prelacy for more information.

\*\*\*

## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱԶԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԶԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ



Չորեքշաբթի, 21  
Դեկտեմբերի կեսօրին,  
Թեմիս բարեխնամ  
Առաջնորդ Բարձր. Ս.  
Մուշեղ Արք. Մարտիրոսեան  
ընդունեց այցելութիւնը Հայ  
Կաթողիկէ համայնքի  
Հիւսիսային Ամերիկայի  
նորընտիր Առաջնորդին՝  
Գերշ. Ս. Միքայէլ Եպսկ.  
Սուրատեանի  
այցելութիւնը, որուն  
կ'ընկերանային համայնքին

Լուս Անճելըսի ժողովրդապետ Հոգշ. Ս. Գրիգոր Վրդ. Շահինեան, Մխիթարեան վարժարանի տնօրէն Հոգշ. Ս. Դաւիթ Վրդ. Ղազարեան եւ Տիկնանց Միութեան ատենապետուհի Տիկին Մարիժան Հարմանտայեան: Առաջնորդ Սրբազանին կողքին, ներկայ եղան Թեմիս Կրօնական ժողովի ատենապետ Գերպ. Ս. Միւռն Ծ. Վրդ. Ազիկեան, Քրեսենթա Հովիտի մեր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Ս. Ղեւոնդ Քիւյ. Զիրազեան եւ Ազգ. Վարչութեան ատենապետուհի Տիկին Ռիմա Պողոսեան:

Գերշ. Ս. Միքայէլ Եպսկ. Սուրատեան առաջնորդական իր պաշտօնը ստանձնած էր աւելի քան երկու ամիս առաջ, յաջորդելով Գերշ. Ս. Մանուէլ Եպս. Պաթազեանի, որ հանգստեան կոչուած էր: Իր պաշտօնը ստանձնելէն ետք, Միքայէլ Եպիսկոպոս առաջին պաշտօնական այցելութեամբ կը գտնուէր Լուս Անճելըս: Ժողովրդապետութիւնը Շաբաթ, 17 Դեկտեմբերի երեկոյեան, ի պատիւ նորընտիր Առաջնորդին, բարի գալուստի համար »Հրաշափառ«ի արարողութիւն մը կազմակերպած էր Կլենտէյլի Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Առաջնորդ Սրբազանը, ընդառաջելով հրաւերին, ներկայ եղաւ արարողութեան:

Ազգ. Առաջնորդարանի «Սիւլահեան» դահլիճին մէջ ընդունելով հիւր Առաջնորդը, Առաջնորդ Սրբազանը անոր ուղղեց շնորհաւորանքի խօսք, ընդհանուր տեղեկութիւններ տուաւ Ազգ. Առաջնորդարանի յարկին ու հովանիին տակ տարուող հոգեւոր, մշակութային եւ կրթական աշխատանքներուն մասին, ապա նաեւ բարի երթ մաղթեց անոր եկեղեցւոյն ու ժողովրդանուէր առաքելութեան մէջ: Խորհրդակցութեան նիւթ եղան միջ-յարանուանական գործակցական կապերն ու ընդհանրապէս հայութիւնը յուզող հարցեր: Հիւր Առաջնորդը, իր կարգին, տեղեկութիւններ հաղորդեց Հայ Կաթողիկէ համայնքի կեանքին ու գործունեութեան մասին, Զանաւորապէս մինչեւ Զաւիֆորնիա:

Հանդիպումի աւարտին, հիւրերն ու հիւրընկալները անցան Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն» մատուռը, ուր միասնաբար աղօթքի պահ մը ունեցան: Այնուհետեւ, Առաջնորդ Սրբազանը հիւր Առաջնորդին ու ընկերակիցներուն ծանօթացուց Առաջնորդարանի

բաժանմունքները, ապա զանոնք հիւրընկալեց ճաշով: Հրաժեշտէն առաջ, Առաջնորդ Սրբազանը եւ հիւր հոգեւոր Առաջնորդը յուշանուէրներ փոխանակեցին:

## PRELATE WELCOMES EPARCH OF THE ARMENIAN CATHOLIC CHURCH OF NORTH AMERICA



On Wednesday, December 21, 2011, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy His Excellency Bishop Mikael Mouradian, the newly named Eparch of the Armenian Catholic Church for the USA and Canada. His Excellency was accompanied by Rector of St. Gregory Catholic Church Very Rev. Fr. Krikor Chahinian, Principal of

Mekhitarian School Very Rev. Fr. Tavit Ghazarian, and Ladies Auxiliary Chair Mrs. Marijan Harmandayan. Joining the Prelate were Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian, Crescenta Valley Church Pastor Rev. Fr. Ghevont Kirazian, and Executive Council Chair Mrs. Rima Boghossian.

Bishop Mouradian was installed as Eparch nearly two months ago, following the retirement of Bishop Manuel Batakian. This was the first official visit of Bishop Mouradian to Los Angeles following his installation as Eparch. On Saturday, December 17<sup>th</sup>, a welcoming reception and "Hrashapar" service was held in his honor at St. Gregory Catholic Church in Glendale, which the Prelate participated in.

The visit began at the "Sulahian" Reception Hall. The Prelate first congratulated Bishop Mouradian on his appointment, then gave an overview of the endeavors of the Prelacy. A discussion was held on collaboration between denominations, and issues of general concern to the Armenian community. Bishop Mouradian also gave an overview of the endeavors and mission of the Eparchy, from Canada to California.

The guests were then escorted to the "St. Dertad and St. Ashken" Chapel for a joint prayer. Bishop Mouradian and guests were then familiarized with the departments of the Prelacy, after which they were hosted to lunch by the Prelate.

The visit concluded with an exchange of mementos.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ԵՂԱՒ USC ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ SHOAH ՀԻՄՆԱՐԿԻՆ ՉՕՐԱԿՑՈՒԹԵԱՆ ԵՐԵԿՈՅԹԻՆ**

Ընդառաջելով Թեմիս ազգային գործիչներին, բարերարներին ու USC համալսարանի հայագիտական բաժանմունքի վարչութեան ատենապետ Տիար Չարլի Կալեանի հրաւերին, գաղութիս անդամներին, բարերարներին ու ներկայացուցիչական դեմքերին աւելի քան 70 հոգի ներկայ եղան USC Համալսարանի ու անոր յարկին տակ գործող SHOAH հիմնարկի գործակցական ծրագիրին զօրակցութեան երեկոյթի մը, որ տեղի ունեցաւ Երեքշաբթի, 20 Դեկտեմբերի երեկոյեան: Գործակցական ծրագիրը կը մէկտեղէ USC համալսարանը, SHOAH հիմնարկն ու Հայկական Ժապաւեններու Հաստատութիւնը:

Առաջնորդ Սրբազանը ներկայ եղաւ ձեռնարկին ու կատարեց բացման աղօթքը:

2010ի Ապրիլին, USCի SHOAH Հիմնարկը համաձայնութիւն մը կնքած էր Հայկական Ժապաւեններու Հաստատութեան նախագահ Տոքթ. Մայքըլ Յակոբեանի (այժմ հանգուցեալ) հետ, ի խնդիր Հայկական Ցեղասպանութենէն վերապրողներու եւ ականատեսներու վկայութեանց պահպանման ու արձանագրումին: Ծրագիրը կը նպատակադրէ Ցեղասպանութեան մասին շուրջ 400 արխիւային նիւթ արձանագրել SHOAHի արխիւներուն մէջ, արդիական միջոցներով (digital), նման՝ Ողջակիզումի մասին արխիւներուն: Այս ծրագիրին ամբողջացումէն ետք, կարելի պիտի ըլլայ աշխարհի որեւէ մէկ շրջանէն կապ հաստատել այդ արխիւներուն հետ:

### **PRELATE ATTENDS EVENT IN SUPPORT OF THE USC SHOAH FOUNDATION**

On the evening of Tuesday, December 20, more than 70 community leaders and members gathered by the invitation of Mr. Charles Ghailian, Chair of the USC Institute of Armenian Studies, in support of a joint collaboration between the USC Institute of Armenian Studies, Shoah Foundation, and the Armenian Film Foundation.

The Prelate attended and delivered the evening's prayer.

In April 2010, the USC Shoah Foundation Institute signed a historic agreement with the late Dr. J. Michael Hagopian, founder of the Armenian Film Foundation. The agreement paved the way for the preservation and dissemination of the largest archive of filmed interviews with survivors of and witnesses to the Armenian Genocide.

Nearly 400 interviews and testimonies of Armenian Genocide survivors and witnesses will be included in the Shoah Foundation's digital archives, allowing individuals from across the world access to this information.

\*\*\*